



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
21 օգոստոսի 2019 թվականի N 225 -Ա

## ՆՈՒՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. N 1239-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 20.08.2019 թվականի ԱԹ/13669-19 գրությունը՝

### Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ .

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գևորգյանին 2 օրով՝ 2019թ. օգոստոսի 23-ից 24-ը գործուղել ՀՀ առողջապահության նախարարություն՝ 2019թվականի հունվար-մայիս ժամանակահատվածում իմունականիսարգելման ազգային ծրագրի շրջանակներում իրականացված կանխարգելիչ պատվաստումների ցածր ցուցանիշների պատճառների քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:
3. Ն.Գևորգյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, ՀՀ Սյունիքի մարզպետին ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

22.08.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: ПОС

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**  
**Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2019թ. օգոստոսի 21  
ք. Կապան

